ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Առկա խնդիրները

Սույն օրենսդրական նախաձեռնությունը նպատակ ունի կանոնակարգել հանրային դիսկուրսում խոսքի և կարծիքի արտահայտման ազատության սահմանադրման և որոշարկման հիմնախնդիրը, որը նախընթաց և ներկայիս հանրային-քաղաքական իրողությունների համատեքստում ձեռք է բերել առանձնահատուկ ցցուն և սուր բնույթ: Մասնավորապես, ՀՀ գործող օրենսդրությամբ լիարժեքորեն կարգավորված չէ կուսակցական քարոզչության ընթացքում կամ հրապարակային խոսքում սահմանադրական կարգը վտանգող գաղափարների տարածման հարցը:

Գործող Քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեորեն պատժելի են միայն որոշակի բռնի գործողությունների հրապարակային կոչերը և ահաբեկչության, դրա ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության քարոզչությունը կամ արդարացումը:

Առկա թերի իրավակարգավորման հետևանքով ստացվում է, որ սահմանադրական կարգի խախտմանը կամ տապալմանն ուղղված կամ սահմանադրական կարգի խախտում կամ տապալում ենթադրող(նշանակող) գաղափարների տարածումը կուսակցությունների կամ անհատների կողմից, եթե դա չի ուղեկցվում բռնության կոչերով կամ չի հանդիսանում ահաբեկչության քարոզչություն, տեղավորվում է խոսքի ազատության տիրույթում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ իրավակարգի այս վակուումը հանգեցրել է նրան, որ գործող կուսակցություններից շատերը, ինչպես նաև տարաբնույթ հանրային և քաղաքական գործիչներ հրապարակայնորեն քարոզում են ՀՀ ինքնիշխանության վերացում և ինտեգրում այլ պետության կազմում, արդարացնում և գովաբանում են կոռուպցիան, կոչ են անում վերացնել Հայաստանում մարդու իրավունքները, գովերգում են ռազմական բռնապետության հաստատման գաղափարը և այսպես շարունակ:

Թափ հավաքող այս հակասահմանադրական և հակապետական քարոզչությունը հեռուստատեսությամբ, ռադիոյով, համացանցում և հավաքներում էական սպառնալիք է Հայաստանի ինքնիշխանության, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակական-պետական կարգի համար: Սահմանադրական ժողովրդավարության շնորհիվ՝ երաշխավորված խոսքի ազատությունը Հայաստանում հանրային որոշակի խմբերի կողմից օգտագործվում է հենց ժողովրդավարությունը վարկաբեկելու, պետական ինստիտուտները

դելեգիտիմացնելու, հանցավորությունը խրախուսելու համար: Որպես արդյունք՝ վտանգվում են ՀՀ հասարակական-քաղաքական համակարգի սահմանադրական հիմքերը և, նախևառաջ առաջ, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված 1-ից 3-րդ անփոփոխ հոդվածներով նախատեսված նորմերը՝ գաղափարական հիմքեր ստեղծելով պետական հեղաշրջման և Հայաստանի անկախ պետականության կորստի համար:

Այսպիսով, մի շարք անձանց կամ սոցիալական խմբերի մտքի, խոսքի և արտահայտման ազատության իրավունքներն իրացվում են՝ խախտելով այլ հիմնարար սահմանադրական արժեքներ՝ ինքնիշխան, իրավական և ժողովրդավարական պետություն ունենալու հանրային շահը և ճշգրիտ ու հանրորեն օգտակար տեղեկատվություն ստանալու մարդկանց իրավունքը:

2. Առաջարկվող իրավակարգավորումները

Խոսքի ազատության իրավունքը, ինչպես և գրեթե ցանկացած իրավունք, անսահմանափակ չէ: Սահմանափակումների իրավաչափության հիմքերը, ընդհանուր առմամբ, հանգում են պետական և հանրային շահի, անվտանգության և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Մասնավորապես, **ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

ՀՀ Սահմանադրական դատարանը **12.02.2021թ.ՍԴՈ-1576 որոշմամբ** անդրադարձել է իրավունքի չարաշահման հասկացությանը՝ արձանագրելով, որ «*իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը. 1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը, 2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, 3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողություններն հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձն ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին, 4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին: Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, երբ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը՝ գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը... հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը.»:*

Սահմանադրական դատարանի կողմից նշյալ որոշմամբ ամրագրվել է այն հիմնարար գաղափարը, որ իրավունքի իրացումն այլ անձանց, պետությանը և հասարակությանը վնաս հասցնող եղանակով հանդիսանում է իրավունքի չարաշահում և պետության կողմից ենթակա է սահմանափակման:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵԿ) 10-րդ հոդվածի համաձայն՝

1. *Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:*

2. *Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Այսպիսով, ՄԻԵԿ-ը ևս թույլատրելի և ընդունելի է համարում պետության կողմից խոսքի ազատության սահմանափակումը նշված հիմնարար արժեքների պաշտպանության և հավասարակշռման նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) զարգացրել է ՄԻԵԿ-ի նշյալ իրավակարգավորումները՝ սահմանելով սահմանադրական կարգի դեմ ուղղված գաղափարների տարածման սահմանափակման կամ արգելման հիմքերը:

Մասնավորապես, **Socialist Party and Others v. Turkey գործով 25.05.1998թ. վճռում** ՄԻԵԴ-ը սահմանել է, որ *քաղաքական ծրագրերը չպետք է վնասեն ժողովրդավարությանը*:

Erdoğdu And İnce v. Turkey գործով **08.07.1999թ. ՄԻԵԴ-ի վճռի համաձայն՝** *խոսքի ազատությունը չպետք է անցնի որոշակի սահմաններ, այն է՝ պետության կենսական շահերի պաշտպանությունը: Այդպիսի շահեր են, մասնավորապես՝ ազգային անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և անկարգության կամ հանցագործության կանխումը:*

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը **Arrowsmith v United Kingdom գործով 05.12.1978թ.** զեկույցում փաստել է, որ *հասարակական կարգի պահպանությունը ևս խոսքի ազատության իրավունքի սահմանափակման*

իրավաչափ հիմք է, եթե այդ իրավունքի իրացման արդյունքում հասարակական կարգը կարող է խախտվել, քանի որ դա կարող է իր բացասական հետևանքներն ունենալ ողջ հասարակության համար:

Քննարկվող հիմնահարցի կապակցությամբ առանձնահատուկ կարևորություն ունի նաև սահմանադրական իրավունքին հայտնի «կենսունակ ժողովրդավարության) (militant democracy) հայեցակարգը, որը ճանաչվել է ՄԻԵԴ-ի կողմից:

Այսպես՝ **Zdanovka v. Latvia գործով 16.03.2006թ. կայացված վճռում** ՄԻԵԴ-ը *ճանաչել է «ժողովրդավարությունը պետք է կարողանա պաշտպանել իրեն» հայեցակարգի լեգիտիմությունը և սահմանել է, որ ժողովրդավարական համակարգի կայունության և արդյունավետության երաշխավորման նպատակով պետությունը կարող է անհրաժեշտ համարել պաշտպանել իրեն առանձնահատուկ միջոցներով*:

Նախթմանն ընդդեմ Ավստրիայի գործով 09.09.1998թ., Շիմանեկն ընդդեմ Ասվտրիայի գործով 01.02.2000թ. վճիռներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *խոսքի ազատության չարաշահում և խախտում է ճանաչել ամբողջատիրական գաղափարախոսությունների և ամբողջատիրական կառավարման վերականգնմանը քարոզումը*:

Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողով) իր **2012թ.դեկտեմբերին ընդունված «Amicus Curiae Brief on the Law on Determining a Criterion for Limiting the Exercise of Public Office, Access to Documents and Publishing, the Co-Operation with the Bodies of the State Security» թիվ 694/2012 խորհրդատվական կարծիքում** նշել է, որ ժողովրդավարական սահմանադրական կարգը պետք է պաշտպանի իրեն օրենքի գերակայության ուղղակի կիրառման և մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների միջոցով:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի ինստիտուտների կողմից ևս իրավաչափ է համարվում ժողովրդավարական սահմանադրական կարգի պաշտպանության նպատակով վերջինիս վտանգ սպառնացող քարոզչության ու հրապարակային կոչերի արգելումը և այդպիսի կոչեր հնչեցնող սուբյեկտների նկատմամբ համաչափ իրավական միջոցների կիրառումը:

Տվյալ պարագայում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածում՝ քրեական պատասխանատվություն սահմանելով ոչ միայն սահմանադրական կարգի բռնի տապալմանն ուղղված կոչերի, այլև այնպիսի կոչերի համար, որոնք ուղղված են սահմանադրական կարգի տապալմանն անգամ ոչ բռնի եղանակներով: Սահմանադրական կարգի բռնի տապալման կոչերն առաջարկվում է սահմանել որպես որակյալ հանցակազմ և նախատեսել ավելի խիստ պատիժ:

Որպես սահմանադրական կարգի սահմանում առաջարկվում է այն նույն սահմանումը, որը գործում է Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածում: Վերջինս

վերաբերում է սահմանադրական կարգի տապալման հանցակազմին: Այս մոտեցումը հիմնավորված է այնքանով, որ խոսք է գնում հարակից հանցակազմերի մասին, որոնք ոտնձգում են միևնույն հասարակական հարաբերության նկատմամբ:

««Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է որպես կուսակցության կասեցման նոր հիմք սահմանել կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմի խախտման քարոզչությունը: Նման քարոզչության դեպքի հայտնաբերման և ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Կառավարությանը հայտնելու պարտականությունն առաջարկվում է դնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտում լիազոր մարմնի վրա, որը ներկայում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունն է: Նախագծով կուսակցության կասեցման ժամկետ է նախատեսվում մինչև Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հաջորդ խորհրդարանական ընտրությունների նշանակման մասին հրամանագրի ընդունմանը հաջորդող օրը:

Կուսակցության կասեցման մնացյալ ընթացակարգերը գործելու են անփոփոխ:

3. Ակնկալվող արդյունքները

Առաջարկվող Նախագծերի ընդունումը թույլ կտա որպես սահմանադրական կարգի տապալման կոչ որակել անձի կողմից ցանկացած այնպիսի կոչի հնչեցումը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածների և 6-րդ հոդվածի 1-ին մասի նորմերի վերացմանը և մեղավորներին ենթարկել քրեական պատասխանատվության՝ կանխարգելիչ ազդակ հղելով երբևէ հասարակական-պետական գործող կարգի տապալման գաղափարա-քարոզչական գործունեություն իրականացնող և այդ քարոզչական թեզերը որպես սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հնարավոր գործողությունների արդարացում և հիմնավորում օգտագործելու նպատակ կամ շարժառիթ ունեցող անձանց, ինչպես նաև հնարավորություն կտա հիմքեր ստեղծել այն կուսակցությունների գործունեության կասեցման համար, որոնք զբաղվում են սահմանադրական կարգի տապալման կամ դրա որևէ տարրի չեղարկման քարոզչությամբ:

Նախագծերի ընդունմամբ պետությունը ձեռք կբերի լրացուցիչ կռվաններ առկա ժողովրդավարական նվաճումները պահպանելու և զարգացնելու, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ամրապնդելու և հանրային համերաշխությունն ապահովելու համար:

Նախագծերի ընդունմամբ՝ կառուցակարգային հիմքեր կստեղծվեն սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար: